Հավելված
ՀՀ վարչապետի 2018 թ.
հոկտեմբերի 8-ի N 1321 – Ա
որոշման

2019 ԹՎԱԿԱՆԻ ՊԼԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԻ ՀԱՄԱԼԻՐ ԳՆԱՀԱՏՄԱՆ

NN ը/կ	Մարմնի անվանումը	Ընդգրկվող ստորաբաժանումները, կազմակերպությունները, քաղաքացիական պաշտպանության ուժերը	Գնահատման ժամանակը	Գնահատում իրականացնող մարմինը	Գնահատման բովանդակությունը
1	2	3	4	5	6
1.	ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն և ենթակա կազմակերպություններ	ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն Քաղաքացիական ավիացիայի կոմիտե (համաձայնությամբ) «Արմենիա միջազգային օդանավակայաններ» ՓԲԸ (համաձայնությամբ)	2019 թվականի փետրվարի 4-8-ը	ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն	I. Քաղաքացիական պաշտպանության (այսուհետ՝ ՔՊ) վիճակի գնահատումն իրականացվում է հետևյալ ուղղություններով՝ 1. Ինժեներական պաշտպանություն 1) աշխատողների ապահովվածությունը պաշտպանական կառույցներով. 2) նկուղների, կիսանկուղների և այլ խորացված կառույցների ֆոնդերի օգտագործումն աշխատողների պաշտպանության նպատակով:

1	2	3	4	5	6
		«Տրանսպորտային ծրագրերի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ (համաձայնությամբ) «Հայաստանի ավտոմոբիլային ճանապարհների տնօրինություն» ՊՈԱԿ (համաձայնությամբ) «Հեռահաղորդակցության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ (համաձայնությամբ) «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ (համաձայնությամբ) «Հատուկ կապ» ՓԲԸ (համաձայնությամբ)			2. Ճառագայթային և քիմիական պաշտպանություն 1) ճառագայթային և քիմիական պաշտպանության ուժերի առկայությունը և պատրաստվածությունը. 2) ճառագայթային և քիմիական պաշտպանության միջոցներով ապահովվածությունը: 3. Բժշկական պաշտպանություն 1) աշխատողների և ՔՊ կազմավորումների անձնակազմերի բժշկական անհատական պաշտպանության միջոցներով ապահովվածությունը. 2) ՔՊ- բժշկական կազմավորումների վիճակը և պատրաստվածության աստիճանը: 4. Տարահանման միջոցառումների կազմակերպում 1) տարահանման մարմինների ստեղծման, նախապատրաստման, պատրաստվածության վիճակը. 2) տարահանման միջոցառումների (շենքից տարահանման) պլանավորումը: 5. ՔՊ կազմավորումների պատրաստվածություն 1) ՔՊ կազմավորումների համալրվածությունն անձնակազմով.

1	2	3	4	5	6
					2) ՔՊ կազմավորումների հագեցվածությունը գույքով և գործող սարքերով. 3) ՔՊ կազմավորումների պատրաստության բերման պլանի առկայությունը: 6. Մարմնի ՔՊ գծով պատրաստման և աշխատողների ուսուցման կազմակերպում 1) ՔՊ ղեկավար կազմի պատրաստում. 2) ՔՊ կազմավորումների պատրաստում. 3) ուսումնավարժությունների պլանավորում և անցկացում. 4) աշխատողների ուսուցում (ուսումնական խմբերի կազմում): 7. Կառավարման, կապի և ազդարարման համակարգեր 1) ՔՊ շտաբների (զորահավաքային մարմինների) և ՔՊ կառավարման այլ մարմինների պատրաստվածությունը. 2) պահեստային կառավարման կետերի (այսուհետ՝ ՊԿԿ) առկայությունը և վիճակը. 3) ՊԿԿ-ի պահպանությունը (կենսապահովման և կապի կառավարման ինքնուրույն համակարգերով հագեցվածությունը).

1	2	3	4	5	6
					4) ՊԿԿ-ի հերթափոխերի առկայությունը (հաշվարկների հերթապահության կազմակերպում). 5) համաձայնեցված, ճշգրտված, հաստատված ՔՊ պլանների առկայությունը. 6) ՔՊ համակարգի խաղաղից ռազմական դրության փոխադրման ժամանակացույցի, կառավարման այլ փաստաթղթերի և հաշվարկների իրատեսությունը, բոլոր միջոցառումների ապահովվածությունը նյութական, տեխնիկական և մարդկային ռեսուրսներով. 7) ՔՊ պլանների համապատասխանությունը ՀՀ կառավարության 2004 թվականի ապրիլի 22-ի N 633-Ն որոշմամբ սահմանված կարգին. 8) մարմնի տարածքում աշխատողների ազդարարման միջոցների, տարահանման սխեմաների առկայությունը. 9) հիմնական և պահեստային կառավարման կետերի ապահովվածությունը ռադիոհեռարձակման ցանցով՝ ազդարարման ազդանշանների և տեղեկատվության հաղորդման համար. 10) ՊԿԿ-ի և ենթակա կառավարման մարմինների միջև ռադիո կապի առկայությունը:

1	2	3	4	5	6
					II. ՔՊ պատրաստության բերման միջոցառումների կատարումը 1. «ՔՊ ղեկավար կազմի կողմից ՔՊ համակարգի պատրաստականության բերման միջոցառումների իրականացումը» թեմայով շտաբային ուսումնավարժության անցկացում:
2.	Անշարժ գույքի կադաստրի կոմիտե	Անշարժ գույքի կադաստրի կոմիտե «Տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոն» (համաձայնությամբ) «Գեոդեզիա և քարտեզագրություն» ՊՈԱԿ (համաձայնությամբ) «Շենգավիթ» սպասարկման գրասենյակ (համաձայնությամբ) «Արաբկիր» սպասարկման գրասենյակ (համաձայնությամբ)	2019 թվականի ապրիլի 1-5-ը	ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն	

1	2	3	4	5	6
		«Կենտրոն» սպասարկման գրասենյակ (համաձայնությամբ) «Երևան» տարածքային ստորաբաժանում (համաձայնությամբ) «Մարզերի միավորված ստորաբաժանում» (համաձայնությամբ)			
3.	ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն և ստորաբաժանումներ	ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն Միգրացիոն պետական ծառայություն (համաձայնությամբ) «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ (համաձայնությամբ)	2019 թվականի մայիսի 14-17-ը	ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն	

1	2	3	4	5	6
4.	ՀՀ կենտրոնական բանկ	ՀՀ կենտրոնական բանկ «Դիլիջանի ուսումնահետազոտական կենտրոն» (համաձայնությամբ)	2019 թվականի սեպտեմբերի 11-13-ը	ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն	
5.	Վիճակագրական կոմիտե	Վիճակագրական կոմիտե	2019 թվականի հոկտեմբերի 2-4-ը	ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն	

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ